**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ**
**ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ**

---

ք. Երևան 31.10.2019թ.

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ
## ՀՀ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁԻ
## թիվ ՍՑ-LO-2019/173

Նախագահությամբ՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձ Լ. Օհանյանի
Քարտուղարությամբ՝ Ռ.Մկրտչյանի

Պատվիրատու՝ ՀՀ քաղաքաշինության կոմիտե
Մասնակից՝ «Շինկենտրոն» ՓԲԸ

Գնման ընթացակարգի ծածկագիրը և առարկան՝
«ՀՀՔԿ-ԳՀԾՁԲ-19/9» ծածկագրով գնանշման հարցում, Երևանի մնջախաղի պետական թատրոնի շենքի վերակառուցման աշխատանքների տեխնիկական հսկողության ծառայությունների ձեռքբերում

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը (այսուհետ՝ նաև Բողոքներ քննող անձ)՝ ուսումնասիրելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության կողմից 14.10.2019թ.-ի թիվ 26/26-1/16852-2019 գրությամբ «Շինկենտրոն» ՓԲԸ-ին (այսուհետ՝ նաև Մասնակից) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգով ներկայացված հիմքերը,

## Պ Ա Ր Զ Ե Ց

## 1. <u>Գործի նախապատմությունը</u>

ՀՀ ֆինանսների նախարարությունը, ՀՀ քաղաքաշինության կոմիտեի 14.10.2019թ.-ի թիվ 02/16.4/6092-2019 գրության հիման վրա, 14.10.2019թ.-ին «Շինկենտրոն» ՓԲԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնել է ընթացակարգ՝ Բողոքներ քննող անձին ներկայացնելով համապատասխան հիմքերը:

Բողոքներ քննող անձի գործը մակագրվել է 14.10.2019թ.-ի և նույն օրը կայացված որոշմամբ գործը ընդունվել է վարույթ ու 22.10.2019թ.-ին նշանակվել է նիստ:

Գործի քննությունն ավարտվել է 22.10.2019թ.-ին և Բողոքներ քննող անձի որոշման հրապարակման օր է նշանակվել 31.10.2019թ.-ին:

## 2. <u>ՀՀ քաղաքաշինության կոմիտեի ներկայացրած փաստերը և դիրքորոշումը.</u>

ՀՀ քաղաքաշինության կոմիտեը 14.10.2019թ.-ի թիվ 02/16.4/6092-2019 գրությամբ դիմել է ՀՀ ֆինանսների նախարարությանը հայտնելով հետևյալը.

*««ՀՀ քաղաքաշինության կոմիտեի կողմից 2019 թվականի սեպտեմբերի 17-ին հայտարարված ՀՀՔԿ-ԳՀԾՁԲ-19/9 ծածկագրով Երևանի մնջախաղի պետական թատրոնի շենքի վերակառուցման աշխատանքների տեխնիկական հսկողության ծառայությունների ձեռքբերման գնման ընթացակարգին մասնակցության հայտ է ներկայացրել <<Շինկենտրոն>> փակ բաժնետիրական ընկերությունը:*

*ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N 526-Ն որոշմամբ հաստատված <<Գնումների գործընթացի կազմակերպման>> կարգի 41-րդ կետի համաձայն՝ Ընկերությանը ծանուցվել է մեկ աշխատանքային օրվա ընթացքում շտկել ներկայացված հայտում արձանագրված անհամապատասխանությունը:*

*Կարգի 42-րդ կետի համաձայն՝ Ընկերության հայտը մերժվել է՝ արձանագրված անհամապատասխանությունը չշտկելու հիմքով:»:*

Միևնույն ժամանակ, հիմք ընդունելով ՀՀ կառավարության 2017թ. մայիսի 4-ի N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 45-րդ կետը, ներկայացնում է Երևանի մնջախաղի պետական թատրոնի շենքի վերակառուցման աշխատանքների տեխնիկական հսկողության ծառայությունների ձեռքբերման նպատակով հայտարարված թիվ «ՀՀՔԿ-ԳՀԾՁԲ-19/9» ծածկագրով գնանշման հարցման

ընթացակարգի շրջանակներում «Շինկենտրոն» ՓԲԸ-ի վերաբերյալ անհրաժեշտ փաստաթղթերը, որոնք կցվել են ՀՀ ֆինանսների նախարարությանն ուղղված գրությանը:

**3. <u>«Շինկենտրոն» ՓԲԸ-ի ներկայացրած փաստարկները և դիրքորոշումը.</u>**

Բողոքներ քննող անձը 15.10.2019թ.-ին գրությամբ դիմել է «Շինկենտրոն» ՓԲԸ-ին՝ հնարավորություն տալով ՀՀ ֆինանսների նախարարության կողմից 14.10.2019թ.-ի թիվ 26/26-1/16852-2019 գրությամբ նախաձեռնված ընթացակարգի վերաբերյալ ներկայացնել գրավոր կարծիք:

Մասնակիցը ստանալով կարծիք հայտնելու վերաբերյալ գրությունը, ինչպես նաև ծանուցված լինելով նիստերի տեղի, օրվա և ժամի մասին, չի ներկայացրել գրավոր դիրքորոշում, առարկություններ կամ կարծիք:

**4. <u>ՍՑ-LO-2019/173 ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը,</u>**

Սույն գործի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերի համաձայն՝

ՀՀ քաղաքաշինության կոմիտեի (այսուհետ նաև՝ Պատվիրատու) կողմից Երևանի մնջախաղի պետական թատրոնի շենքի վերակառուցման աշխատանքների տեխնիկական հսկողության ծառայությունների ձեռքբերման նպատակով 17.09.2019թ.-ին հայտարարվել է «ՀՀՔԿ-ԳՀԾՁԲ-19/9» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգ (այսուհետ՝ նաև Ընթացակարգ):

Ընթացակարգին մասնակցության հայտ է ներկայացրել նաև «Շինկենտրոն» ՓԲԸ-ն:

Ընթացակարգի հրավերով նախատեսված ծառայությունների մատուցման համար պահանջվել է

| |
|---|
| **ԼԻՑԵՆԶԻԱ**<br>(<Լիցենզավորման մասին> ՀՀ օրենք) |

| |
|---|
| **Շինարարության որակի տեխնիկական հսկողություն** (բացառությամբ շինարարության թույլտվություն չպահանջող աշխատանքների, համապատասխան նպատակի համար նախատեսված հողամասի տարածքում ոչ ձեռնարկատիրական նպատակով սեփականատիրոջ կողմից կառուցվող՝ 300 քմ ընդհանուր մակերեսը չգերազանցող՝ մինչև երկու վերգետնյա ու մեկ ստորգետնյա հարկ ունեցող անհատական բնակելի տների, հաստատված բազմակի օգտագործման օրինակելի նախագծերով կառուցվող օբյեկտների, 150 քմ ընդհանուր մակերեսը չգերազանցող օժանդակ շինությունների, 50 քմ ընդհանուր մակերեսը չգերազանցող ավտոտնակների, 1000 քմ ընդհանուր մակերեսը չգերազանցող ջերմոցների, 500 քմ ընդհանուր մակերեսը չգերազանցող գյուղատնտեսական արտադրական նշանակության ոչ հիմնական շինությունների և 100 քմ ընդհանուր մակերեսը չգերազանցող հասարակական նշանակության ոչ հիմնական շինությունների):<br>**Կամ**<br>**Շինարարության որակի տեխնիկական հսկողություն** (բացառությամբ շինարարության թույլտվություն չպահանջող աշխատանքների): |
| **ԼԻՑԵՆԶԻԱՅԻ ՆԵՐԴԻՐՆԵՐ**<br>(<ՀՀ կառավարության 2009 թվականի հուլիսի 2-ի N 777-Ն որոշում>)<br>*(լիցենզիայի անբաժանելի մաս հանդիսացող համապատասխան ոլորտի աշխատանքներն իրականացնող պատասխանատու անձանց)* |
| - **բնակելի, հասարակական և արտադրական**<br>- **հիդրոտեխնիկական**<br>- **էներգետիկ**<br>- **կապի** |

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի (այսուհետ նաև՝ Հանձնաժողով) 07.10.2019թ.-ին կայացած նիստի թիվ 2-2 արձանագրության համաձայն՝ «Շինկենտրոն» ՓԲԸ-ի կողմից ներկայացված հայտում բացակայում են հրավերով պահանջվող «Քաղաքաշինության բնագավառում շինարարության որակի տեխնիկական հսկողություն (բացառությամբ շինարարությամբ թույլտվություն չպահանջող աշխատանքների) լիցենզիայի «Կապի» ներդիրը:

Նույն արձանագրության համաձայն՝ Հանձնաժողովը, հիմք ընդունելով ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ին թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 41-րդ կետի պահանջը, որոշել է մեկ աշխատանքային օրով կասեցնել նիստը և էլեկտրոնային եղանակով տեղեկացնել մասնակցին՝ առաջարկելով մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել արձանագրված անհամապատասխանությունները:

Հանձնաժողովի 09.10.2019թ.-ին կայացած նիստի թիվ 2 արձանագրության համաձայն՝ «Շինկենտրոն» ՓԲԸ-ի կողմից հրավերով սահմանված ժամկետում (08.10.2019թ.) որպես արձանագրված անհամապատասխանությունների շտկում, փաստաթղթեր ընդհանրապես չեն ներկայացվել, ինչով պայմանավորված Մասնակցի հայտը գնահատվել է անբավարար և մերժվել է:

Հանձնաժողովի քարտուղարի կողմից armeps.am համակարգի միջոցով ընթացակարգի նիստը կասեցնելու և Մասնակցին արձանագրված անհամապատասխանությունները շտկելու վերաբերյալ ծանուցում ուղարկված լինելու հանգամանքի վերաբերյալ

որևէ փաստաթուղթ չի ներկայացվել, այլ կցվել է armeps.am համակարգի ոչ ավտոմատ ծանուցումներ բաժնի արտատպված (screenshot) տարբերակը:

## 5. <u>Բողոքներ քննող անձի հիմնավորումները և եզրահանգումը</u>.

Բողոքներ քննող անձը լրիվ, օբյեկտիվ և բազմակողմանի հետազոտելով և գնահատելով սույն գործում առկա ապացույցները, և համադրելով դրանք գործով պարզված փաստական հանգամանքների հետ, հանգում է այն եզրակցության, որ ՀՀ ֆինանսների նախարարության կողմից 14.10.2019թ.-ի թիվ 26/26-1/16852-2019 գրությամբ «Շինկենտրոն» ՓԲԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգն ենթակա է մերժման, հետևյալ պատճառաբանությամբ.

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ նաև՝ Օրենք) 30-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ մասնակիցը հայտը ներկայացնում է հրավերով սահմանված կարգով: Հայտը ներառում է մասնակցի հաստատած՝

1) հրավերի պահանջներին իր տվյալների համապատասխանության մասին հայտարարությունը.

2) գնային առաջարկը.

3) ոչ գնային առաջարկը (տեխնիկական առաջարկ կամ տեխնիկական բնութագիր), եթե հրավերով նախատեսված է.

4) հրավերով նախատեսված այլ փաստաթղթեր (տեղեկություններ):

ՀՀ կառավարության 04.05.2017թ. թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (այսուհետ նաև՝ Կարգ) 41-րդ կետի համաձայն՝ եթե հայտերի բացման նիստի ընթացքում իրականացված գնահատման արդյունքում մասնակցի հայտում արձանագրվում են անհամապատասխանություններ՝ հրավերի պահանջների նկատմամբ ներառյալ այն դեպքերը, երբ հայտում ներառված՝ Հայաստանի Հանրապետության ռեզիդենտ հանդիսացող մասնակցի կողմից հաստատվող փաստաթղթերը կամ դրանց մի մասը ներկայացված են հաստատված բնօրինակ փաստաթղթից արտատպված (սկանավորված) տարբերակով և հաստատված չեն էլեկտրոնային թվային ստորագրությամբ, բացառությամբ այն դեպքերի, երբ հայտում բացակայում է գնային առաջարկը կամ հայտի ապահովումը, կամ գնային առաջարկը, կամ հայտի ապահովումը ներկայացված է հրավերի պահանջներին անհամապատասխան, ապա հանձնաժողովը մեկ աշխատանքային օրով կասեցնում է նիստը, իսկ հանձնաժողովի

քարտուղարը նույն օրը դրա մասին էլեկտրոնային եղանակով տեղեկացնում է մասնակցին՝ առաջարկելով մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել անհամապատասխանությունը:

Կարգի 42-րդ կետի համաձայն՝ եթե սույն կարգի 41-րդ կետով սահմանված ժամկետում մասնակիցը շտկում է արձանագրված անհամապատասխանությունը, ապա նրա հայտը գնահատվում է բավարար: Հակառակ դեպքում հայտը գնահատվում է անբավարար և մերժվում է:

ՀՀ քաղաքաշինության կոմիտեի կողմից Երևանի մնջախաղի պետական թատրոնի շենքի վերակառուցման աշխատանքների տեխնիկական հսկողության ծառայությունների ձեռքբերման նպատակով 17.09.2019թ.-ին հայտարարված «ՀՀՔԿ-ԳՀԾՁԲ-19/9» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի հրավերով նախատեսված ծառայությունների մատուցման համար պահանջվել է նաև

| **ԼԻՑԵՆԶԻԱՅԻ ՆԵՐԴԻՐՆԵՐ**<br>(<ՀՀ կառավարության 2009 թվականի հուլիսի 2-ի N 777-Ն որոշում>)<br>*(լիցենզիայի անբաժանելի մաս հանդիսացող համապատասխան ոլորտի աշխատանքներն իրականացնող պատասխանատու անձանց)* |
|---|
| - **բնակելի, հասարակական և արտադրական**<br>- **հիդրոտեխնիկական**<br>- **էներգետիկ**<br>- **կապի** |

Հանձնաժողովի 07.10.2019թ.-ին կայացած նիստի թիվ 2-2 արձանագրության համաձայն՝ «Շինկենտրոն» ՓԲԸ-ի կողմից ներկայացված հայտում բացակայել են հրավերով պահանջվող «Քաղաքաշինության բնագավառում շինարարության որակի տեխնիկական հսկողություն (բացառությամբ շինարարությամբ թույլտվություն չպահանջող աշխատանքների) լիցենզիայի «Կապի» ներդիրը, ինչով պայմանավորված Հանձնաժողովը որոշել է մեկ աշխատանքային օրով կասեցնել նիստը և էլեկտրոնային եղանակով տեղեկացնել մասնակցին՝ առաջարկելով մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել արձանագրված անհամապատասխանությունները:

Հանձնաժողովի 09.10.2019թ.-ին կայացած նիստի թիվ 2 արձանագրության համաձայն՝ «Շինկենտրոն» ՓԲԸ-ի կողմից հրավերով սահմանված ժամկետում (08.10.2019թ.) որպես արձանագրված անհամապատասխանությունների շտկում, փաստաթղթեր ընդհանրապես չեն ներկայացվել, ինչով պայմանավորված Մասնակցի հայտը գնահատվել է անբավարար և մերժվել է:

Վերոգրյալ իրավանորմի համալիր վերլուծությունը՝ գործով հաստատված փաստերի գնահատմամբ, թույլ է տալիս եզրակացնել հետևյալը.

Օրենքի 3-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին և 2-րդ կետերի համաձայն՝ գնումների գործընթացը հիմնվում է հետևյալ սկզբունքների վրա.

1) գնման գործընթացի միասնական կանոններով մրցակցային, թափանցիկ, համաչափ, հրապարակային և ոչ խտրական հիմունքներով կազմակերպում.

2) պայմանագրի կնքման նպատակով մասնակիցների շրջանակի ընդլայնում և նրանց միջև մրցակցության խրախուսում:

Օրենքի 7-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ ցանկացած անձ, անկախ նրա օտարերկրյա ֆիզիկական անձ, կազմակերպություն կամ քաղաքացիություն չունեցող անձ լինելու հանգամանքից, ունի գնման գործընթացին մասնակցելու հավասար իրավունք:

Վերոնշյալ իրավական նորմերի վերլուծության արդյունքում, Բողոքներ քննող անձը, փաստում է, որ գնումների օրենսդրությունը, հիմնվելով գնման գործընթացի մրցակցային, թափանցիկ, համաչափ, հրապարակային, ոչ խտրական, գնման գործընթացին մասնակցելու իրավահավասարության սկզբունքների վրա, նպատակ է հետապնդում ապահովելու գնումների գործընթացում հատուցման դիմաց պատվիրատուին վերապահված լիազորությունների կատարման համար անհրաժեշտ՝ կարիքին համապատասխան ապրանքների, աշխատանքների և ծառայությունների ձեռքբերումը՝ համարժեք հատուցմամբ, և որ ամենակարևորն է՝ գնումների գործընթացի տնտեսող, արդյունավետ և օգտավետ իրականացման ապահովումը:

Ինչպես նաև, Բողոքներ քննող անձը հարկ է համարում հավելել, որ վերոնշյալ սկզբունքների ապահովումն ու իրականացումը գնումների օրենսդրության շրջանակներում իրացնելու համար, անհրաժեշտ պայման է նաև ցանկացած անձի՝ գնման գործընթացին մասնակցելու հավասար իրավունք ունենալու սկզբունքը՝ անկախ նրա օտարերկրյա ֆիզիկական անձ, կազմակերպություն կամ քաղաքացիություն չունեցող անձ լինելու հանգամանքից:

Սույն գործի փաստերի համաձայն, Բողոքներ քննող անձը փաստում է, որ Հանձնաժողովի քարտուղարի կողմից armeps.am համակարգի միջոցով ընթացակարգի նիստը կասեցնելու և Մասնակցին արձանագրված անհամապատասխանությունները շտկելու վերաբերյալ ծանուցումն ուղարկված լինելու փաստն ապացուցող փաստաթուղթ չի ներկայացվել, այլ կցվել է armeps.am համակարգի ոչ ավտոմատ ծանուցումներ բաժնի արտատպված (screenshot) տարբերակը, որի ուսումնասիրության արդյունքում «Շինկենտրոն» ՓԲԸ-ին ծանուցումն ուղարկված լինելու հանգամանքը նույնպես չի ապացուցվում: (screenshot) տարբերակից պարզ չէ՝ նամակը ուղարկվել է, թե ոչ:

Վերոնշյալով պայմանավորված, Բողոքներ քննող անձը հարկ է համարում նշել, որ հայտերի բացման նիստի ընթացքում «Շինկենտրոն» ՓԲԸ-ի հայտում հրավերի պահանջների նկատմամբ անհամապատասխանություններ արձանագրելուց հետո Հանձնաժողովի քարտուղարը էլեկտրոնային եղանակով չի տեղեկացրել մասնակցին և չի առաջարկել մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել անհամապատասխանությունը՝ խախտելով Կարգի 41-րդ կետով սահմանված պահանջը, ինչն և իր հերթին հանգեցրել է Օրենքի 3-րդ և 7-րդ հոդվածներով սահմանված պահանջների խախտմանը:

Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետի համաձայն՝ ... մասնակիցն ընդգրկվում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում, եթե խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը.

Նույն հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ գնումների գործընթացին մասնակցելու իրավունքից զրկված մասնակցի վերաբերյալ ունեցած տեղեկությունների հիման վրա լիազորված մարմինը ընթացակարգ է նախաձեռնում: Տվյալ մասնակցի կարծիքը լսելուց հետո գնումների հետ կապված բողոքներ քննող անձը նույն օրենքի 50-րդ հոդվածի 6-րդ մասով սահմանված ժամկետում որոշում է կայացնում մասնակցին նույն հոդվածով նախատեսված ցուցակում ընդգրկելու վերաբերյալ: Անձը նշված ցուցակում ընդգրկվում է երկու տարի ժամկետով:

Այսպիսով, վերոհիշյալ փաստական հանգամանքների և իրավական նորմերի լույսի ներքո, դրանց համակարգված վերլուծության արդյունքում, Բողոքներ քննող անձը հանգում է այն եզրակացության, որ Մասնակցի կողմից չի խախտվել գնման գործընթացի շրջանակում ստանձնած որևէ պարտավորություն, որն էլ կարող էր հանգեցնել գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը:

Ուստի «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետում նշված պատասխանատվությունը չի կարող վրա հասնել ու հանգեցնել Մասնակցին՝ գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ընդգրկելուն:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասով, 50-րդ հոդվածի 7-րդ մասի 2-րդ կետով՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը.

## Ո Ր Ո Շ Ե Ց

ՀՀ ֆինանսների նախարարության կողմից 14.10.2019թ.-ի թիվ 26/26-1/16852-2019 գրությամբ «Շինկենտրոն» ՓԲԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված թիվ ՍՑ-ԼՕ-2019/173 ծածկագրով ընթացակարգը մերժել:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի ընդունած որոշումն ուժի մեջ է մտնում այն տեղեկագրում հրապարակելուն հաջորդող օրը:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի ընդունած որոշումն իրավապարտադիր է, որը կարող է փոփոխվել կամ վերացվել, այդ թվում՝ մասնակի, միայն դատարանի կողմից:

**ՀՀ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ**
**ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ՝** **ԼԵՎՈՆ ՕՀԱՆՅԱՆ**